

ՔԱՏԱՆՈՐՈՎ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Մշակարից համար
Տարեկան 10 Ձր.
Վեցամսեայ 5 »

Բնասանկանի համար
Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

Սանիկայի համար
Տարեկան 2.50 Տր.
Վեցամսեայ 1.25 »

ՎԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Իրանուզան սոցիալական
կուսակցության համար 40 սանիկով
և իսկ վերջին երեսի համար
20 սանիկով և. երեքին
սանիկ անգամներու համար
20 Օլո գեղը կըրայ :

ՇԱՐՄ

Նախկին և նորագույն
Խմբագրություն և հասցի

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՄ ՕՐԵՐԸ

Գրությունք և ներքին

(ԳԻՆ, 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ, 10 ՍԱՆԹԻՄ)

ԻՆՉ ԿԸՆԷ ՄԱՐԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Ինչ կը գտնայ աշխարհի մէջ. այսինքն ինչ կընեն ճիշտագործները, անոնց արդարացի լարախաղները և խեղճ, թշուառու աննշուղ ժողովուրդները, որոնք բոլոր միասին այս թէ անտանելի և թէ այնքան սիրելի աշխարհին գիտակաւոր և անդիմակ դերակատարները են :

Վեհագետները խաղալիք դարձած իրանց մանկալուիկներու ձեռքերուն մէջ՝ կուտեն, կը խմեն, իրար կայցելեն, կը սպառնան՝ ու իրենց հպատակներուն կը ճգմեն հարկերու և սուրբերու ծանրութեան սակ: Տիպոմատները, այդ կայսրական և արքայական սարուկները բոլոր ուժերնին լարած՝ աչքերնին սնկած են այս և այն անկիւնը աշխարհի նոյնիսկ ամենահեռու ծայրերուն վրայ, յափշտակելու պատառ մը կը փնտռեն, իրենց աէրբու փառքը քանցելու և իրենց աջակից ու գործակից դրամատէրներու գրպանները լեցնելու համար. անշուշտ, իրենց համար ալ խոշոր պատառ մը հանելու միտումով :

Ահա այդպէս կապրին աշխարհի տէրերը, զօրեղները, իրենց քեֆին, հաճոյքներուն և խելառ ծրագիրներուն ծառայեցնելով հարիւրաւոր միլիոններով ժողովուրդներու կեանքը ու աշխատութեան արդիւնքը :

Եւ այս բոլորը կը կատարեն ժողովուրդներու անունով, բայց առանց անոնց հարցնելու :

Եւ ինչ կընեն ժողովուրդները. կաշխատին և անօթի կը մնան. չիւտուր կուտան երկիրը պաշտպանելու, սրուն սուած արդիւնքի ամենաչնչին մասը իսկ իբր իրենց աշխատանքի վարձատրութիւնն անգամ կը զլացուի. իրար կը մորթեն առանց թշնամութիւն մը ունենալու. և չիբենք ճգնողներու համար սին փառաց

գափնին կը քաղեն. եւ այսօր այդ գրութեան մէջ են բոլոր ժողովուրդները եւրոպական և թէ Ասիական սեւ, ճերմայ և պղնձագոյն ազգերը :

Ու այդ միլիոնաւոր ժողովուրդներու բախտին անիւր կը գտնուի քանի մը հարիւրաւոր ձեռքերու մէջ, որոնք երկաթէ մամուլի մը պէս կը սեղմեն մարդկութեան կոկորդը :

Բայց մինչեւ ե՞րբ . . .

ՌՈՒՍԱՅԱՅՐ

Մեր մէջ կայ արմատացած սովորութիւն մը, այն է՝ խորութիւն գնել մեր համարիւն, սրբտակից եղբայրներուն մէջ, որոնք թէպէտ միեւնոյն հողէն սերած և միեւնոյն բունին վրայ աճած, ուռճացած, սակայն այսօր անողոք բախտին անողոք բերումով, աշնան սերեւներուն նման, հոս ու հոն ցրուած են, օր մը վերտին իրենց բնիկ հողին վրայ ամփոփուած ըլլալու հաստատ մտադրութեամբ :

Այս պահուս՝ կարմիր Մարդուն շնորհիւ, աշխարհի չորս ծայրերը կը գտնուին հայեր, որոնք իրարմէ կորստին երկու մեծ գիծերով. Ռուսահայը և Թրքահայը, կամ Արեւելքի ու Արեւմուտքի հայերը :

Մենք Թրքահայերս շատ ու շատ փոքր թուով հետաքրքրուած ենք Արեւելքի հայերուն մտաւորական, տնտեսական և յեղափոխական կեանքին՝ և անոնց ըրած յառաջադիմական քայլերուն մասին :

Թողունք առաջին երկու կէտերը և առենք վերջինը: Յեղափոխական ոգին, մէկ քանի օրինակելի և աննման ահալիրաներով, արագօրէն ծաւալ առած է անոնց մէջ և քիչ առեղծն՝ սուր հանգամանք մը ստացած :

Թրքական անամական ըժմիմը չի կար հոն. հոն կային կեանքի և ինչքի ապահովութիւն. հանգիստ էր հայը: Ինչո՞ւ ուրեմն այնքան սերաի փարեցան ա-

նոնք յեղափոխական փրկարար գործին և ըայն ազգին ապագայ փրկութեան միակ յենակէտը նկատեցին :

Պատճառը հեշտին է գուշակել: Այո, հանգիստ էին Ռուսահայերը. սակայն խոհական շրջահայեցողութեամբ և սուր հեռատեսութեամբ անկասկած էին նսեւթէ՝ ոչ կամ կանուխ Չարերու անդրգուելի վճիռով որոշուած էր հայ տարրին ձուլումը :

Հայկական դատի վերածնութեան և քայլ առ քայլ յառաջդիմութեան համար՝ թրքահայը տուաւ ջերմ հայրենասէրներ և իրենց կեանքը զոհող յիշատակելի հերոսներ, բայց չարտադրեց ոչ Գամառ-Քաթիպա մը և ոչ Բաֆֆի մը :

«Անահիտ» «սուր» տրամաբանութեամբ և «նոր կեանք» ի անհամ ժամանցներով՝ երկու հրապարակագիրներ ջանահնար եղան, վերջին գէպը բէն ետքը, հեգնել Ռուսահայերը, երբեմն յայտնի, երբեմն քողարկեալ ձեւերու տակ՝ սա առարկութիւնը մէջտեղ նետելով թէ՛ պէտք է ին փորձել իրենց ծրագիրը կովկասի մէջ :

Այդ հրապարակագիր պարոնները գիտակցաբար և անձնական պնդում ու ողորմելի հաշիւներէ թելագրուած՝ անուղղակի կերպով կը ջանան վարկաբեկ ընել Ռուսահայերը և անշրպետ մը գոյացնել մեր և անոնց մէջ :

Ռուսահայերը, հակառակ իրենց կամքին, ակնյայտնի կը տեսնեն որ բիրտ ուժին առջեւ ոչինչ կարող են ընել. անողոք արջին արիւնոտ ճիրանը պրկած է զիրենք: Օրինակ Ֆինլանտիան, որ տարտաբխաբար վիճակուած է մեր տխուր ու կսկծեցուցիչ վախճանին: Նահատակ ազգի մը սրտամորմոք լացն ու կոճը և անոր բռնաբարեալ իրաւունքներուն պաշտպանութեան մասին՝ եւրոպական ազգերու կողմէն ուղատամիտ և մարդասէր խմբակի մը միջամտութիւնն ու խնդրանքը հիւլէի չափ իսկ կարեւորութիւն չունեցան անգուլթ արջերուն քով: Սոյնգունակ պա-

րագաներու առեւ՛ այս եղած է Չարերուն պատասխանը. ես եմ տէրն այս երկրին և կամքիս համաձայն կը անօրինեմ ամէն ինչ :

Ռուսահայերն՝ իրենց կորուստի մօտալուտ վախճանին վրայ՝ քաջապէս համոզուած՝ աշխատեցան և կաշխատին մեզի հետ Թրքահայաստանի մէջ ունենալ բոլոր հայերուն համար ապահովատեղի մը :

Ահա այս գուրգուրալի համոզումով մեր մէջ կուգան համալսարաններ, ինչքի և դիրքի տէր համակրելի անձնաւորութիւններ. այս միակ համոզումով՝ Գամառ-Քաթիպան գրեց իր հայրենասիրական հրաշունչ տաղերը և Բաֆֆին իր Խենթը :

Ինչ որ կարելի չէ յուսալ մեր դատին յաջողութեան համար Ռուսիոյ Հայաստանի վրայ, նոյնը յուսալ մեծապէս հեշտին է Թուրքիայէն գրուուած հայկական հողին վրայ: Թուրքիա, հակառակ իր յոյս սուած կեղծ ջանքերուն, յայտնի է որ մահամբձ վիճակի մէջ կը գտնուի :

Թուրքիա կը նմանի այսօր այն պարտաւէր վաճառականին, որ անուանական և առժամանակեայ ներկայութիւն մը ունի իր վաճառատան մէջ, ինքն իր երկրին տէրը չէ: Ամենափոքրիկ գէպ մը ահու գողի կը մատնէ զինքը և կորուստի խորխորատին կը մօտեցնէ :

Մենք՝ հայերս կը գտնուինք պարտապահանջներու շարքին մէջ: Մեր արդար պահանջքը գանձելու համար՝ միշտ պէտք է կազմ և պատրաստ գտնուիլ, առիթը չի փախցնել. ի հարկին նաեւ զայն ստեղծել :

Ռուսահայ, Պուլկարիա, Սերպիա, Յունաստան գանձեցին իրենց պահանջքը :

Եթէ Թուրքիոյ մէջ վիժի մեր ծրագիրը, այն առեւն վերջացած է հայութիւնը, ոչ թէ այսօր, այլ վաղը, և այդ չարաշուք վաղուան շիրականացուսին համար Ռուսահայերը կուգան մեր քով և կը տքնին մեզի հետ Թուրքիոյ Հայաստանի մէջ ստեղծել Հայոց անկախ կայան մը, որ ապագայ

փրկութեան տախտակը պիտի ըլլայ նաեւ կողմասի և արտասահմանի բոլոր հայերուն համար :

Հասկնանք զիրար և սիրով գործենք մէկմէկու հետ :

Եւ դ՛ուք, «ազգասէր» եղևորուեակ հրապարակագիրներ, գրեցէք ու մրեցէք որքան ասան որ պիտի ներեն ձեր գրիչն ու քոսկը և ջանացէք երբեմն ուղղակի և երբեմն անուղղակի միջոցներով անջրպետ մը բանալու, աշխատիլ մեր և Արեւելքի հայոց մէջ : Սակայն յաւ համազուեցէք որ շուրջ պղտորելէ դադարած է և վերստին իր վճիռ յստակութիւնը գտած :

Ձեր խօսքերն ու գրուածքները գորտի կոկոնցներու ազգեցութիւնն ունին միայն թէ՛ ունկնդրողին և թէ՛ կարգացողին վրայ : Մենք և Արեւելքի հայերը միացած՝ անվհատ հետամուտ ըլլալու ենք, խօսքով, գրիչով և զէնքով, գանձելու համար մեր արդար պահանջքն, որ ազգին ապագայ կեանքի գոյութիւնը պիտի ապահովէ իսկապէս և մըշտապէս :

Ահա մեր հաստատ համոզումը : ԱՌՅ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Տրապիզոն, 24 Յուլիս
Սիրելի զաւակս դու և կը գրես թէ հայրենիք գնա, բայց չեմ գիտեր թէ ինչ պատասխանեմք զի քանի որ լաւ գիտես հայրենիքի վիճակը, նա մանաւանդ մեր գիւղիները բոլորովին թիւրք և քիւրտ լեցուած են, գաղթած ու ոչնչացած հայոց տուններուն տեղը : Տիրող թշուառութիւնը արդէն չափ ու սահման չունի, սակայն քանի որ ես այստեղ անկարող եմ աշխատելու և տարիքս ալ եօթանասունին կը մօտենայ, գերեզմանը ամէն օր ինձ համար բացած է իր դռները որ զիս իր մէջը ամիտիէ : Այսուհանդերձ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՃԱՐԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Այժմ լուս հաստափոր Օրմանեանին, որ սա քննադատուի և ճգնաժամային օրերուն մէջ հացին կը քոտ մըն ալ աւելցաւ : Եթէ մինչեւ ցարդ արտասահմանի ազգակիցներէն մէկը չէր համարձակած զինքը հրապարակաւ պաշտպանելու, հիմա թո՛ղ հրճուի այդ հիգրան և խնդայ կոկորդալի, սրովհետեւ թէ իր անձը և թէ իր գետնաքարը քաղաքակառնութիւնը արդարացնել փորձող խոչոր խրատելիակ մը մէջանդ ինկաւ ոտքով ձեռքով : Եւ ո՞վ, զիտէ՞ք : Մարտիկոյ «մեծամարա» մարդու կը կամ «Արմենիա» անճոռնի մրտադրու : Ետ աղէկ կը հասկցուի թէ՛ այս օրերս, անոր արդէն անապատ միտքը անհունապէս անկման և զատարկութեան մատուցելով, ալ տա-

կընդունիմ ձեր առաջարկը, և կերթամ հայրենիք, գոնէ այն հողին վրայ մեռնել և Ձէկէլէի ժայռերուն տակ առնեմ իմ հանգիստս, ուր որ է մեր նախնաց հանգստարանը : Իայց զիտցած եղի որ բոլորովին յուսահատ պիտի մեռնիմ : հայրենիքի աննշովը այրուած և թէ քեզնէ ալ բոլորովին կարօտ մնացած : Ուստի կըսեմ սիրելի զաւակս դու և ալ սիրէ քու հայրենիքը և զիտցիր որ մեծ պարտականութիւն մը ունիս կատարելիք զէպի տառապող եղբարց և քերց համար : Պիտի գայ օր մը որ դուն դրախտանման երկրին մէջ պիտի առնես քու հանդիսող և պիտի վայելես մարդկային ամէն բարիք :

Գալով անդու Տրապիզոնը, գարձած է կատարելալ գոյութիւնը մեզ հայոցս համար : Երկու ամիսի չափ է որ գալով ճամբորդները այստեղ կարգիին : հայրենիքէն գալով հայը չեն թողուր որ արտասահման երթայ և ոչ ալ կը թողուն որ անմիջապէս ետ դառնայ : հապա, երեսուն օրի չափ բանալ և այստեղ թափառեցնելն վերջը ետ կը դրկեն : Իրտասահմանէն գալողը նմանապէս այնչափ օր կսպասեցունեն հոս և գալած շողենաւորին ետ կը զրկեն թողած երկիրին : Մօտերս այստեղ բերին վաթսունի չափ Մշեցի պանդուխտներ, որոնք այլ և այլ կողմերով իրենց հայրենիքը գացած էին : ոմանք երկու օր միայն իրենց տունը մնացած էին, ոմանք հազու հասած էին և ոմանք ալ կէս ճամբայէն բռնած էին և բերած են այստեղ : Այժմ բանտն են, չենք գիտեր թէ ինչ պիտի լինի այս խեղճերու վիճակը : նաեւ մաս մը Պայպուրթիներ մաս մըն ալ Գէմախի և Թէրճանցիներ եկած են իրենց հայրենիքը երթալու նպատակաւ : երեսուն օր է որ այստեղ կը թափառին : Դեռ որո-

շուելու հում ատաղձ չէ գտեր, ու ելեր անլի չաղփաղփութեամբ մը գայլի աւետարան կը կարգայ Պուրկարիոյ, Ամերիկայի, Եգիպտոսի և նոյն իսկ Ռուսաստանի հայութեան ողջ գլխուն, վնասակար հոչակելով անոր զէպի Օրմանեան բռնած աննպատ ընթացքն և զատապարտելով «չիչուելի» համար եղած ամէն որոշում ու շարժում :
«Կա՛յ քեզ քաղաք զի թաղաւորդ մանուկ է» : այս խօսքին ուղիղ իմաստն է՝ վա՛յ քեզ զլուս, զի խելքըդ խակ ու խելառ է :
Իսկապէս, չէր արժեր պատասխանել այդպիսին, բայց միւս կողմէն բոլորովին ձեռնպահ մնալու ալ ըստններուն յայտնապէս հաւանութիւն տալ են թաղայրիւղ, հարկ կը համարինք այդքան չոր միսիթարութիւն մըն ալ զլանալ մեր խմբագիր զոյրին : որպէսզի, ուրիշ անգամ քիչ մը զգուշանայ արտասահմանի հոծ հայ համայնքին արդարացի արարքներն պատարմութեամբ անտեղի համարելէ : Ահա թէ ինչու :

շուրջ տրուած չէ ասոնց մասին : կերելայ թէ ասոնք ալ ետ պիտի զրկեն և չը պիտի թողուն որ իրենց հայրենիքը երթան : Ահա այս է մեր բարեխնամ կառավարութեան այժմու հետեւող քաղաքակառնութիւնը : հայրենիք գալ ուղղները թող լսեն և ըստ այնմ շարժին

Հայրդ Տ. Յ. Թ.
Սօփիա, 29 Օգոստոս

Մի քանի օր է որ մայրաքաղաքը, Մակեդոնիաէն հասած յուզաբառ լուրերն կը արտայ : Մտաւրտ մեծամեծ աղէտներու թոթը դուշակող հեռագրին անհամբեր կսպասուէր : Օրթերթերը ու թոռցիկ յայտարարութիւնները իրբեւ «յղագիրսկան» դէպքեր» հոչակեցին առաջուց երբ ամէն ինչ անորոշ էր : Բայց վերջ ի վերջոյ յստակ ու հաւաստի տեղեկութիւններ պարզեցին ամէն բան : Յայտնի է թէ, Մակեդոնիաի ազգարնակութիւնը շատ բարդ է և զանազան սարբերէ : Պուրկար, սերպցիւնցար (ռուսէն) յոյն և ալպանացիներէ բաղկացած է և ասոնց ամէնն ալ իրենց ազգային անկախութեան ձգտումներէն չեն բնկրկած : Թիւրքը այնքան խորամանկ է եղած այս տեսակ երկիրներ կառավարելով որ իր այս մէթէնիքեան քաղաքականութեան պահանջած մէթոտին (այսինքն նենգութիւնը ու դաւերը) գործադրմանը մէջ, հիացուցած է շատ մը եւրոպացի դիւանագէտները : Այս սլալ ազգերու մէջ եկեղեցական ու կրօնական վէճերը ու կոիւները անպակաս են եկեր գեռ շատ առաջ և նոյն եռանդով ալ կը շարունակուին

Թիւրքը մշակուած ծրագրի մը հիման վրայ կը գործէ, նա գաղտնօրէն իրեն վտանգաւոր եղող տարրը ճնշելու յարատեւ կաշխատի, միշտ իրեն նպատակաւ հանգամանքներ ստեղծելով : Այն գաւառները ուր Պուրկարները բազմաթիւ և կը գորտոր են՝ նա սերպերուն, յոյներուն և ցինցարներուն պաշտպանը կը կանգնի : և որովհետեւ ասոնք փձքարմասնութիւն կը կազմեն կարեւորութիւն շտար, և բացարձակ ու որոշ կերպով կը գրգռէ, կրօնական ու ազգային խնդիրներ նետելով մէջտեղը : Դատարաններու մէջ պուրկարի ան-

ժըխտելի իրաւունքը կը բռնաբարուի և յօդուտ յոյնին կամ սերպին կը վճարուի : Իսկ ասոր փոխարէն յոյնը լիովին հաւատարիմ կը մնայ թուրքին և կսկսի «մանաւորութեան», և լրտեսութեան ինչպէս նաեւ սերպերը, ցինցարները : Անցած տարի յոյները պուրկարներու եկեղեցիները յափշտակեցին և կառավարութիւնը յոյներուն իրաւունքը ճանչցաւ :

Ներկայ Գուճանդիի զէպերն ալ կրօնական քարաքիւղ կրող խնդիր մըն է : հոս սերպերը թուով շատ քիչ որ ըլլալով՝ իրենց համար սեփական եկեղեցի չունենալով՝ պուրկարներու եկեղեցին կը յաճախեն եղեր, բայց Հաֆըզ-Բաշայի դրողումով սերպերը կուզեն այդ եկեղեցիին տիրանալ, ապացուցանելով անոր սերպերէ շինուիլը, սուտ ու շինծու վկայագրիներով : Պուրկարները կը զիմարեն և երկար դատաւարութիւն մը կսկսի, այնպէս որ դործը Սուլթան Համիտին կը հասնի, «արդարութեան» էմրիման այս հայրագութ Փատիշահը կը անօրինէ որ պուրկարները անիրաւի ըլլալով պարտին 1000 ոսկի և եկեղեցական կայտածք մը առաւ որ Սերպերը իրենց եկեղեցին շինեն :

Օգոստոս 24ին Գուճանդայի երեւելի կանայք ժողով մը կը գումարեն և կերպնուն որ իրենց անձը զոհեն և թոյլ չը տան որ այս աւազակային կարգ գրութեամբ վճար ի գործ դրուի : 25ի առաւօտուն, 700—800 կանայք քարերով և թիւրերով զինեալ կերթան սերպերու նոր շինելիք եկեղեցիին խաչը ոչ հիմերը քարոքանք կընեն : վրայ կը հասնին 70—80 ոստիկաններ, բայց յետ կը մղուին : քիչ յետոյ զօրք կուգայ և ժխտական կուր մը կսկսի : կանայք անօրինակելի քաղութեամբ կը զիմարեն : զօրքը կը վարանի և յետոյ սուրիններու ու հրացանի կոթերով կարող կըլլայ ուժասպառ ընել այդ քաղաքները : երկու կողմէն ալ շատ վիրաւորած կան : Երկրորդ օրը կանայք վալիի քօնաքը կը խուժեն, կուզեն նեյս մտնալ, պահապանները չեն թողուր, պայքար մը ու արիւնահեղութիւն կըլլայ : Գալիք խոսովութիւններուն ալ առաջը աննելու համար զօրքը ամբողջ քաղաքը կը շրջապատէ : ոչ գուրս ելլելու ու մաներու հրաման կըլլայ : Առաջնորդական փոխանոր-

թիւ խմբագիրները մի քանի ոչխարափա երիտասարդներ իրենց գործիք ընելով՝ եկեղեցիներուն մէջ Պատրիարքը չպիտի յիշուի գայթակղական ցոյցերը սարքեր են : Թէ այդ ցուցարարները յատուկ զիտուժով կը մոռնան, որ մեր դատը չէ թէ Օրմանեանի, այլ թիւրք կառավարութեան զէմ է : ուստի անոնց այդ ընթացքը կը ճառայէ տկարացրելու Պատրիարքի հեղինակութիւնը ու ազդեցութիւնը—եւ միայն կը շահեցնէ թշնամիին : Թէ հին ժամանակներն ալ եկեղեցիներուն մէջ ատանկ ցոյցեր եղած են, բայց այժմեանն ատարբեր և անվտանգ—Թոնչընէ եղեր Օրմանեան, երբ 2—3 տարի առաջ, Սրիմեանի պէս հայրենասէր կաթողիկոս մը և Իդմիրլեանի նման անվեհեր Պատրիարք մը ունեցած ասանիս իսկ ամենէն ստակալի կոտորածները պատահած են : — ըստ որում— ներկայ կացութեան մէջ նկատելիք խնդիրներուն լուծումը Պատրիարքէն անկախել տիրացուական քաղաքականութիւն

զը եւ մի քանի ջոջեր կը ձերբարկուին : Տեղւոյն հոգեւոր պատուով զինքն զարմուտնք ունեցեր է : Կանանց պարագլուխներէն Իվանքա Իվանովա, Թոնայանքա Կորէզլա եւ Պապա Իլէնքա, սաստիկ գանահարած ու վիրաւորած են : Կանայք աղբեր մը խմբագրելով հետագրով զիրենք են այդ ճիւղալը ծնող, Համիտին, Հանրմ-մօրը :

Արդեօք այսպէս են պաշտպաներ իրենց ազգային իրաւունքները մեր վախճանուն հայուէինները :

Գոհութեամբ կ'իմացնեմ որ տեղւոյ մատան մէջ լեպ. Տին Տէր Արիստակէս քահանան, Ալէքսանտր Եպիսկոպոսի սրտակակիծ ու վաղաժողով մահուանը առթիւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարէ : Փափաքելի էր որ Պուլկարիոյ ուրիշ քաղաքներէն ալ չետեւէր այդ հայ կղերականութեան լաւագոյն զէմքերէն միոյն արժանաւոր յիշատակը յարգելու :

«Արարատեան թոնիկը» ժողովուրդի ծոցը ապրած եւ ժողովրդի ցաւերուն նուիրուած ըլլալով է որ իր օգտակար կեանքը այդ զարհուրելի անբնական հիւանդութեան ենթարկուեցաւ : Նա Օրմանեանի դաւերուն զոհն է : Ինչպէս որ Նար-Պէյ Աշքեանի զոհն էր :

Ամենահաստատ ազգութիւն կը տեղեկանամ թէ Ռուսոյքի նշանաւոր խայտառակ ազաները չը բաւականանալով իրենց ըրածներէն՝ հեռագրով իսկ կը զանգատին ներքին զորոնց նախարարութեան «գրեցի» հայերէն : Կը խնդրին որ Պուլկար կատարութիւնը զօրաւոր միջոցներ ձեռք առնէ «գրեցի» հայերը զսպելու : Օ (՝) լրբութեանց լրբութիւնը (՝) անպատուութեան ու ստորնութեան ամենայնոյն կայտարանը ուր ազգաւ կը պատուարուի : Թող ամբողջ արտասահմանի հայութիւնը իմանայ որ Պուլկարիոյ մէջ «զազափարական» կոխներուն այս տեսակ զէնքերով կը պատասխանեն :

Մասնութիւնը ու դաւաճանութիւնը իրենց ամենաընտրեալ յուսահատական միջոցներն են :

Այս «չիրքերուն» անուները իմանալով պիտի յայտարարեմ, թող իրենց քանի մը Ֆիլիպպի եղբայրներուն հետ սիրով ողջագրուին :

որովհետեւ անոնք ալ ազգային գործերու մէջ իրենց խաւարած ուղեղներէն առայնորդուելով «ստիկանութեան» ձեռքով կը կատարեն ամէն բան :

Կը շնորհատրեմք թող զիրար գրկեն :

S.

Վիլնիւսիւսօրօ, 22 Օգոստ.

«Ղէն» լրագրի մէջ կը կարգանք հետեւեալը :

Փրնէվի «Երիտասարդ Թուրքերու» գումրիքէն մեզ կը ծանուցանէ թէ՛ այն 6 թուրքերը, զոր Ահմէտ Ճէլալէտտին փաշա ստակի եւ զանազան պաշտօններու խօստամներով Պոլիս վերադարձուցած է, երիտասարդ թուրքերու չեն պատկանիր, այլ հասարակ ճամբորդներ են, որոնց եւրոպայ բնակիլը Մուլթանի անվըտահութիւնը կը գրգռէր : Այս անձանց վերադարձը բնակարեւորութիւն չունի գումրիքէի համար, որուն միակ նպատակն է շարունակել իր կուր ազատութեան եւ արդարութեան համար եւ զէմ կենալ ամէն տեսակ ստորին կաշաւման փորձերու :

Միթէյլ-Անու-Օրիէնթ ամսաթերթին մէջ կը կարդանք հետեւեալը :

Կը խնդրենք մեր գերմ. բարեկամներէն որ մեր շինած պատկերաւոր նամակաթուղթերով նամակ չի շրկեն թուրքիս, (Որբախնամ գերման գումրիքէն հայ որբերու օգտին համար պատկերաւոր նամակաթուղթեր, քարթթեր կալին կը ծախէ) որովհետեւ թուրք կառավարութիւնը ամբաստանած է գումրիքէն առարկելով թէ, այդ թղթերով յեղափոխական բրոյականտա կընէ : Ասի Մուլթանի փորի ցաւն է, (Խեղճ հիւանդ մարդ) որովհետեւ թուղթին վրայ գերմաներէն գրուած է եւ Ասիոյ ու Հայաստանի մէջ ոչ ոք կը հասկնայ :

Կերեւի թէ «հիւանդ մարդուն» աչքերը կուրնալու եւ խելքը թռելու շրայ է եւ առոր ապացոյց հետեւեալը կը բաւէ—նոյն թերթէն քաղուած :

Անցեալները մեր պատուէրին համեմատ որբանոցի հայ աշխատարներէն մին նամակ մը կը գրէ ուրիշ տեղ մը հոնկէ որբեր Ամասիա բերելու համար : Նաեւ կը յայտնէ թէ այդ աղաքը Ամասիոյ մէջ հողագործութիւն եւ դարձնութիւն սորվելէ վերջ կարող են իրենց հայրենիքը վերադառնալ :

Նամակը կը բռնուի եւ նամակագիր հայը բանալը կը նետեն : Իբր պատճառ բանտարկութեան հետեւեալ հանելուկը երևան կը բերեն :

Նամակին մէջ Ամասիա բառը Ամերիկա կը նշանակէ, դարբնութիւն սորվիլ, թնդանթ շինել եւ հայրենիք վերադառնալ թուրքերու դէմ կուռելու համար : Այս լուրը մեզ անհատաւորի երեւնայ թերեւս, բայց խեղճ հայը դեռ բանտն է :

ԳԵՂՈՒՆԻ

ԳՐԵՑՅԻՒՍ ԿՐԿԻՆ ԴԱՍԱՊԱՐՏՎԱԾ

Դրէյֆիւսի երկրորդ գառն էլ վերջացաւ : Դժբախտ հրէան դատապարտվեց երկրորդ անգամ, թէեւ աւելի մեղմ պատիժով :

Ամբողջ լուսաւոր մարդկութիւնը ոչ չի ուշով լարված նետազերով հետեւում էր հրէա սպայի դատին, որի անմնչութեանը հաւատացած էր եւ դեռ հաւատում է . . .

Բայց ի՞նչ նշանակութիւն ունի մարդկութեան կարծիքը . . . Ի՞նչ նշանակութիւն ունի մեղադրող փաստերի բացառիկութիւնը այնտեղ, ուր անհրաժեշտ է որ մէկը պատմվի, անհրաժեշտ է որ մէկը մեղաւոր ճանաչվի, որովհետեւ գործված յանցանքը

եւ այդ առթիւ ցուցարարներն ալ սիրացու յեղափոխականներ են : Քանի որ Մուլթանի ճնշման զոհներէն մին է քնականաբար Կ. Պոլսի Պատրիարքն եւ այս գիտէ հայն ալ, եւրոպացին ալ : Վերջապէս ամէն յուզում եւ կուսակցութիւններ պէտք է կանգ առնեն եկեղեցիի դրան, որովհետեւ չպիտի յիշուի հրամանը կեդր. խտան ժողովին կախումն ունի. եթէ ոչ հատրիտքարանի հետ յարաբերութիւններ խզել հարկ կըլլայ, ինչ որ ո՛չ մէկ խելացի հայ պիտի ուզէ : Եւ ահա ամէն ինչ, կամ մի-ե նոյնն է ըսել, խորհեցաւ եւ խուկաց «մեծ խմբագիրն», ու արտագրեց ոչ ի՞նչ :

Արդարեւ, շատ ու շատ հակասութիւններու հանդիպել կարելի էր, բայց ոչ սասանկ փոստած փաստաբանութեան մը. վասն զի աշխարհ գիտէ թէ, Տիար Մ. Չերազ արտասահմանի բոլոր հայութեան միաձայն հաւանութեամբն ու ընտրութեամբն փութաց բողոքելու ներկայացնելու լաճէ, առանց սակայն մեր դատի

մասին անմիջական նկատառութիւն մը սպասելու : այնպիսի ժողովէ մը, որուն գործիքը հաստատապէս զնուած էր առաջնաց : Ասիկա ի նկատի ունենալով, մեր ըրածը միայն հետադարձ փորձ մըն էր զէմ անգամ մըն ալ բարոյական եւրոպայի ու շարքութիւնը գրաւել՝ զազանային բռնութեան գոյացած մեր արդար պահանջներն նկատմամբ, ինչ որ փառաւորապէս յաղոցեցաւ եւ անսպասելի արձագանք մըն ալ տուաւ քրիստոնէսայ մամուլին եւ զիւանազիտական աշխարհին մէջ : Ալ զիւրին է հետեւեցնել թէ, Օրմանեանի անամթ հետագրին—իբր թէ—հայկական հարցին լուծուելուն արգելք չի կարգուի համար չէր որ, ինչպէս կը բանդագուէլ Մարտիլիոյ մեծախօսը, արտասահմանի ամբողջ հայութիւնն ազնիւ ու նախանձախնդիր բարկութեամբ մը լեցուեցաւ, այլ պարզապէս այն բանին համար, որով երանելի Պատրիարքը նոյն խայտառակ զերթ խաղաց (հետագրել) յանձն առնելէ զատ՝ նաեւ բացարձակապէս

անուսնարկեց Պուլկարիոյ : Ամերիկայի եւ Եգիպտոսի հայութիւնը, ստուերարկեց անոր վեճ ձեռնարկին սրբութիւնը՝ պաշտօնապէս եւ ի լուր տեսնելի պօքալով թէ, ինքը բնաւ մեզ բանի տեղ չտեղեկ եւ երբէք օրինաւոր չճանչնար մեր ներկայացուցիչն ալ, զիմունն ալ ի Լաճէ :

Այս պարագային մէջ, հայ եղողը, իրօք այդ խնկարկու խմբագրին տարօրինակ անզգայութիւնը կրելու էր, որ հանդուրժէր հրէյ հօտապատի մը իր հօտին հանդէպ ըրած անպատշաճ անարգանքին : Չէ՛, քանի որ նա առանց խղճածարիւտ անուղղակի կերպով մեզ կուրանայ, կը վիրաւորէ մեր տածած ազգագրութեան մանրէք, ուրեմն ի՞նչ սրտով փարինք իրեն, սիրենք զինքը, պատուենք ու պահենք պատրիարքական աթոռին վրայ, արդեօք տուե՞նու համար :

Այսքան սկիւրեւ պայմաններու տակ, վատութեանց էն վեճափառ տեսակը չէ՞, ելնել բարբառել թէ՛ քանի մը ոչխարամիս երիտասարդներ, գործիք գառնալով թերթի մը

կայ : Չար բախտը Դրէյֆիւսին էր վիճակել Ֆրանսիական բարոյապէս ընկած սոցալակոյտի մեղքերի քաւութեան նոխալը լինել. եւ, նրան զօրով զոհում են . . .

Բայց եւ այնպէս վերջին գատը սպացուցեց որ Դրէյֆիւս առաջին անգամ դատապարտված էր անհիմն կերպով, որովհետեւ եօթը գատաւորներէն երկուսը Դրէյֆիւսին բողոքովին անմեղ են ճանաչել, իսկ հինգը մեղմացուցիչ պարագաներ են գտել : Դեռ այս գատը չսկսված՝ Դրէյֆիւս անպայման դաւաճան էր համարվում : Իսկ այսօր, երկրորդ գատից յետոյ, նոյնիսկ գատաւորները աչքում Դրէյֆիւս դաւաճան չէ, այլ հաւատարմութեան մէջ կատկածելի, այն էլ հինգ գատաւորի համար :

Յաղթութիւնը Դրէյֆիւսի եւ նրա պաշտպաններին կողմն է. արդարութիւնը կիսով չափ յաղթող է հանդիսանում եւ երկրորդ գատ պահանջող Ֆրանսիացիները արժանում են թէ իրանց հայրենիքի եւ թէ ամբողջ մարուր ու լուսաւոր մարդկութեան համակրանքին :

Այս իրողութիւնը ամենաազդու շօրաւիզը կը լինի արդարապէս Ֆրանսիացիներին՝ իրանց սկսած վեճ եւ մաքուր գործը աւելի ուժգին, աւելի ազդու կերպով յառաջ մղելու :

Որովհետեւ մարդկութեան աչքն ու մասի համար Դրէյֆիւս անմեղ է . . .

ՎԱՐԴՕ

վարչներուն, ազօթարանները խոտվարաններուն կը վերածեն զգլխի յիշուի պատճառով : Ո՛վ այլանդակ անհամութիւն : Անդին՝ թուրքիայէն դուրս, գրեթէ ամբողջ հայ գաղութներ զայրութեամբս բաղձանքով հետզհետէ եկեղեցիներէն դուրս կուլին ազգաջեաս Պատրիարքին անուներ, ապին խիկարագլուխ խմբագիր մը, մեր այդ ընտիր ընթացքը իբրեւ յանցանք կը բեռնէ մի քանիներուն անմեղ ուսին, սակայն ին խօսի եգիպտոսի 350 ստորագրողներուն, որոնք՝ ըստ մեր մարդուկին՝ կարծուած «ոչխարամիտներն» ըլլալու են : Այսչափ ալ ճշմարտութեան զէմ պոռնկացում. այսչափ ալ բաց աչքով պայծառ արեւը չտեսնելու չափ կուրութիւն : Ալ այս կէտին դատասանը՝ մտադիր ընթերցողին կը ձգեմ վճռելու համար թէ բուն «հայհոյիչը» վառնայի թերթին վարչներն են, եթէ ոչ «Արմենիա» խաւութեան խոհիմացը :

Ս. ԳՈՒՍՅՐ

(Շարունակելի)

ՏՐԷՅՅԻՒՄԻ ՕՐԱԳՐԷՆ
ԲՍՏԱՆԱՅԻ ԿՂՁԻՆ ՄԷՉ

«14 Ապրիլ 1895, այսօրուանէ կսկսիմ օրագիրը տխուր և զարհուրելի կեանքիս, եւ այսօր առաջին անգամն է որ տրամագրութեանս սակ թուղթ ունիմ, այն ալ թուահամարով և լուսանցքով, որպէս զի չը կարողանամ պակասեցնել, գործածելու համար համարատու եմ: Բայց ինչիս պիտի ծառայէ թուղթը, որո՞ւ պիտի տամ ես զայն: Ինչ գաղտնիքներ ունիմ արդեօք վստահելու այս թուղթին:

Այնքան հարցեր, այնքան հանելուկներ: Մինչեւ օրս ես ունէի իրաւունքի պաշտամունքը, կը հաւատայի իրերի, դէպքերու տրամաբանութեան, վերջապէս կը հաւատամ մարդկային արգարագատութեան. և ամէն բան, ինչ որ տարօրինակ և խելքէ դուրս էր դժուարութեամբ կը մտնէր ուղեգրիս մէջ...

Ո՛հ, ինչպէս խորտակուեցաւ ունեցած հաւատքս:

Աւրիչ կտոր մը.

«Այս գիշեր, անքուն դիշեր մըն է: Նոյն միտքը կը դառնայ գլխուս մէջ. ո՞ր են իմ երիտասարդութեանս գեղեցիկ երազները, հասուն հասակիս ձգտումները: Այլեւս ոչինչ կապրի իմ մէջ. ուղեզս կը ճղմուի մտքիս լարումէն և սարսափելի տրամին գաղտնիքներէն: Դեռ այսօր իսկ բան մը չեմ հասկնար եղածէն: Պատժուիլ առանց շօշափելի փաստերու, միայն մէկտօկիրումանի մը հիման վրայ:

Նեարդներուս զգայնութիւնը, այս սոսկալի շարժարանքէն վերջը, այնքան սուրցեր է որ ամէն նոր տպաւորութիւն, նոյնիսկ արտաքին, խոր վէրքի մը ազդեցութիւնը կը թողու վրասս:

Աւրիչ կտոր մը.

«Շարունակ առանձին՝ մտքիս հետ եմ, առանց լուր մը ունենալու իմիններէս: Պէտք է որ ես ապրիմ միայն՝ իմ բոլոր վշտերուս հետ. պէտք է որ արժանավայել կերպով տանիմ իմ տանջանքներս որ քաջութիւն ներշնչեմ իմ սիրելի կնոջս, ընտանիքիս, որը ինձի չափ կը տանջուի: Հեռի թուղթիւնը: Ուրեմն, նորէն յուսանք. այդ պէտք է իմ երեսմաներուս համար: Կրկին քանի մը ամիս: Ես դաւաճան մը: Միայն այս խօսքին համար արիւնս գլուխս կը թռի: Ամբողջ էութիւնս կը կատարի բարկութեանս և զղուանքէս:

Յաճերէն ամենայնտիւնը հը՛:

Ո՛հ, պէտք է որ ապրիմ, գիմանամ ցաւերուս, որ օր մը անմեղութիւնս լիովին ճանչցուած տեսնամ:

Է՛հ, շարունակ ոչինչ. յանցաւորը գտնուած չէ: Ո՛հ, թշուա-

ռական. ենթարկուած եմ թէ ընտանիքիս և թէ իմ տանջանքներուս: Չեմ խօսիր այն ցաւերու մասին՝ որ ամէն օր սիրտս այնքան կը վիրաւորեն: Եռանդ կը ներշնչեմ կնոջս: Ես ընտանիքիս, դաւակնորուս և իմ պիտուիւս կուզեմ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վանէն ներսէս Եպիսկոպոս Արաւանեան գրեր է Պատրիարքարան թէ թեմին մէջ աննշան թուով դպրոցներ գտնուելուն պատճառով 30 դիւղերու մէջ դպրոցներ պիտի բանայ, որուն համար դասագրքեր կուզէ: Պատրիարքարանը մտադիր է հեղհեղէն զրկել պահանջուած դասագրքերը:

Պիթիլի Ողորմարաշխեմանձնաժողովը խուլութիւ կրկին որբանոցին վերաբայման համար 25 ոսկի յատկացուցեր է. Պատրիարքարանն ալ ամսական երկու ոսկի նպաստ պիտի տայ նոյն դպրոցին:

Պատրիարքը ներքին գործոց նախարարին գրութեամբ մը տեղեկացուցեր է Հաճրնի հրկիւղելոց անպատասպար և օղնութեան կարօտ վիճակը և կառավարութեանն գթութիւն խնդրեր է: Հաճրնի հրկիւղելոց յատկացուած 100 ոսկին արգէն զբրկուած է:

Խարբերդի առաջնորդ Պետրոս վարդապետ յայտնելով որ կարող քարոզիչ վարդապետի մը անհրաժեշտ պէտք ունի, խնդրած է Պատրիարքարանէն որ վարչական կարողութիւն ունեցող և դպրոցական գործէ հասկնող օգնական վարդապետ մը զրկուի Խարբերդ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տրէյֆիւս գատապարտուած է. եօթը գատաւորներէն, հինգը միայն կասկածի վրայ հիմնուած գատապարտելու ձայն տուած են. իսկ երկուքը բոլորովին անմեղ գտած են:

Տրէյֆիւս տասը տարուան բերդարգելութեան գատապարտուած է. ոչ սատանայի կղզիին մէջ այլ Գորսիկայ: Սատանայի կղզիին մէջ տնցուցած հինգ տարին ալ պիտի հաշուուի:

Կրսեն թէ Տրէյֆիւսականք գոհ չըլլալով այս որոշումէն, գիմում կընեն վերջին գատավճիռը կրկին քննել տալու Լիւմօթի զինուորական ատեանին առաջ:

Սեպտեմբերի Տին Թրիէտտի մէջ և շրջակաները Իտալացիները մեծ ցոյց մը ըրած են Մեննօթի կարկալտի այցելութեան առթիւ: Քանի մը հողի, ի պատիւ Պարկալտի և Իտալիոյ համակրական ազգակներ բարձրացնելու համար ձերբակալուած են:

Սեպտեմբերի եօթնէն մինչ-

չեւ ութը Աղեքսանտրոյ հիւանդանոցները համաճարակէն վարակուած ոչ մէկ մարդ մտած է: Վերջին տասն և երեք օրուան մէջ վարակման միայն մէկ դէպք մը հաստատուած է: Կը կարծուի թէ համաճարակը վերջացած է:

Պուտափէշթի մէջ ժողովուրդը գրգռուելով Քրանական կառավարութեան դէմ, Տրէյֆիւսի գատապարտման համար յարձակում գործեր է ֆրանսական հիւպատոսարանին վրայ: Տեղական կառավարութիւնը ըստիպուեց է պաշտպանութեան միջոցներ ձեռք առնել:

Ռուսական Բիէլ նահանգին մէջ Պէրտիչէֆ քաղաքին բնակիչները գլխաւորաբար հրէաներ են: Ռուս կառավարութիւնը մտաւորապէս երեսուն ալօթարան և ուսումնարան գրաւեր է:

Հնդկաստանի անգլիական զինուորներուն հրամայուած է տեղափոխուիլ հարաւային Աֆրիկէ:

Տրէյֆիւսի գատապարտութիւնը ճնշող տպաւորութիւն գործած է Իտալիոյ, Անգլիոյ, Աւստրիոյ և Պէլճիգայի մէջ: Ամէն տեղ Տրէյֆիւսը անմեղ կը ճանչցուի և կապասուի որ նախագահ Լուպէն գատարաններու գործը կը վերջացնէ ներումով: Տրէյֆիւս ստորագրեր է Բարիլի վճարակաւ առեանին գիմելու թուղթը:

Կը յուսացուի թէ հանրապետութեան նախագահը պիտի ներէ:

Փրանսայի վաճառականութեան նախարար, որ ընկերվարական է, Պ. Միլլրանի օրգանը կառավարիչ զինուորական գատարանները ոչնչացնել:

Շուտով պիտի սկսի Զօլայի գատը: Լապօրի որ վերջինիս փառաբանն է, Տրէյֆիւսի գատին համար պատրաստած ճառը պիտի արտասանէ այդ գատին ժամանակ:

Ռուս և Աւստրիական կառավարութիւնները զգուշացուցեր են Սերպիոյ Աղեքսանտր թագաւորը ձերբակալուած ազատական պետերուն մահուան գատապարտելէ:

Ն.Ս.Մ.Ս.ԿԱՏՈՒՓ

Մ. Բէնտիկ. — Չեր անունով խմբագրութեանս հասցէին նամակ մը կաս:

Չ. է. — Չեր թղթակցութիւնը դեռ ստացած չենք. ինչպէս կերեւի կորսուած է: Չեր յիշած համարները մեղ ետ եկաւ, կաշխատինք յարմարութիւնը գտնալ նորէն զրկելու:

Ռուսչուք. Ֆ. Հ. — Չեր յօդուածը չի հրատարակուիլ, չարժէր այդ չնչին անհասկանալի զբաղիլ: Ատոնք բոլորն ալ անճարակ և ակուանները արգէն թափած մարդիկ են:

—(—)

ԹԱՏԵՐՍԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Յառաջիկայ երեքշաբթի գիշեր Հաճի Բանաքօ «Պօրիս» թատրոնին մը զպիտի ներկայացուի Կենովաքէ անուն 6 արարուածով և 8 պատկերով մնչկատակիսայը, ինչպատ Տիար Տ. Գուլէմճեանի և Սթավրօի:

Տ. Գուլէմճեան՝ հայ թատերաբեմին վաղեմի աշխատակորներէն մին, արդէն ծանօթ ըլլալով մեր հասարակութեան աւելորդ կը համարինք զինքը ներկայացնել, բայց կը շեշտենք թէ կարժէ որ մեր ժողովուրդը իր քաջալերութիւնը չզլանայ Վանայ հայդուկներու, սասունի քաջերու և այլն հեղինակին:

Ա. Չ. Ի.

Տոպրիչի աղջկանց վարժարանին համար կուզուի վարժուհի մը որ կարողանայ աւանդել հայերէն լեզուի եւ երկրորդական ուսումնարան ձեռագործ՝ գոհացուցիչ ամսականով: Փափագողները գիմեն հոգաբարձութեան նամակով:

Арменско училищно настоятелство
гр. Дюбрюче

ժՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂՆԸ
Գաւառ-Գաթիպա
Գրեց ԲԱՅԱՎԱՍՏԱՐԻ:

Պուրկարիոյ մէջ զինք 50 սանթիմ, իսկ արաստանմանի համար 60 սանթիմ:

Յանկացողները թող գիմեն Շարժումի խմբագրութեան:

ՎԱՐԿՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻԾ)

(Գիւն 1 Ֆրանգ)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՛ Տ. Անասի կոչի մօտ. Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը:

Ս. ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ
ԿՕՇԿԱԿԱՐ

Մուսալլա, րադնիքի փողոց,
Հաճի Հասանի օրհիլն սակ:

Ճաշակաւոր, տոկոս եւ ձեւաւոր կօշիկ շինել սալուզող պէտք է գիմէ Պ. Ստեփան Պօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեսան կելլայ:

Գիները խիստ գիւրամատչելի:

ԿՈՒՉԷ՛Ք ՀԱՐՍՏԱՆՈՒ

Գիմեցէ՛ք

Մ. Թիւթիւնճեան եւ ընկի Ռուսչուք

Ռ. ր ըստ ստալչնոյն կը վաճառեն Սօֆիա քաղաքի Պուրկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի սոսկակները:

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կը ընդունուին:

Печатница „Взаимность“ Варна